

ԳԼՈՒԽ

7

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§2

ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

862. (Մեծերի կյանքից. Նիլս Հենիկ Աբել): Նիլս Հենիկ Աբելը ծնվել է 1802 թվականին Նորվեգիայի Ֆինգե բնակավայրում, պաստորի աղքատ ընտանիքում: Պահպանվել է նրա մաթեմատիկայի ուսուցչի կարծիքը դպրոցի աշակերտ Աբելի մասին. «Այդ երեխան մեծ կրքոտությամբ էր զբաղվում մաթեմատիկայով և կարճ ժամանակում հասավ միայն հանճարին հատուկ հաջողությունների»: 1820 թվականին, հոր մահից հետո նա ապավինեց իր ընդունակություններին և դրանցով հիացած պրոֆեսորներին, որոնք էլ ֆինանսավորեցին համալսարանում նրա ուսումը:



Սակայն ժամանակի նորվեգական համալսարանները հեռու էին նրա սիրելի գիտությունից, և Աբելը իր մաթեմատիկական կրթությունը ստանում էր ինքնուրույն զբաղմունքով: Այդ ժամանակներում եվրոպական մաթեմատիկոսների միտքը զբաղեցնող հիմնական պրոբլեմը հինգերորդ աստիճանի բազմանդամի արմատները հաշվելու բանաձևը գտնելու հարցն էր: Բանն այն է, որ երկրորդ աստիճանի բազմանդամների արմատները հաշվելու բանաձևը գտնված էր շատ վաղուց, իսկ երրորդ և չորրորդ աստիճանի բազմանդամների արմատները հաշվելու բանաձևը դեռ երեք դար առաջ գտել էին իտալացիները: Եվ երեք դար շարունակ

խոշորագույն մաթեմատիկոսները աշխատում էին հինգերորդ աստիճանի բազմանդամի արմատները հաշվելու բանաձևը գտնելու խնդրի վրա: Եվ ահա, հակառակ սպասվածի, 1824 թվականին ուսանող Նիլս Աբելը հրատարակեց մի գրքույկ, որտեղ ապացուցվում էր, որ չորսից բարձր աստիճանի բազմանդամի արմատները գտնելու ընդհանուր բանաձև գոյություն չունի: Ավելին, նա ցույց տվեց, որ կան բազմանդամներ, որոնց համար նման բանաձև կարելի է գտնել: Համապատասխան օբյեկտները հետագայում կոչվեցին Աբելի անունով (աբելյան հավասարումներ, աբելյան խմբեր): Սակայն հանճարներին դժվար է հասկանալ: Եվ Աբելի աշխատանքների նկատմամբ լռություն պահպանեց թե Գաուսը, որին Աբելը ներկայացրել էր իր աշխատանքը, թե ֆրանսիական խոշորագույն մաթեմատիկոսները, որոնց հետ շփվելու հույս ուներ նա Փարիզ տեղափոխվելուց հետո: Բոլորը լռություն պահպանեցին: Իսկ կարիքը և առողջությունը քայքայում էին երիտասարդ հանճարին: Եվ միայն նրա մահից (1829 թ.) հետո գիտնականները պիտի խոստովանեին, որ նա «այն հազվագյուտ մարդկանցից է, որոնց բնությունը սեղծում է հարյուր տարին մեկ անգամ»: